

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/2

30 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ֆամիլե» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Ազարյանի 02.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 17.07.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293213 որոշման դեմ:

Արամ Ազարյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 17.07.2015 թ-ի թիվ 293213 որոշմամբ Արամ Ազարյանի նկատմամբ առաջադրվել է վարչական տույժ՝ տուգանք 100.000 դրամի չափով:

Վերը նշված որոշման հիմք է հանդիսացել Արամ Ազարյանի ղեկավարած Ընկերությունում կատարված ստուգման արդյունքում կազմված 01.07.2015 թ-ի թիվ 5103810 ստուգման ակտը:

Թեպետ վերը նշված վարչական որոշումը թվագրված է 17.07.2015 թ. ամսաթվով, սակայն այն հանձնվել է փոստային ծառայությանը 23.09.2015 թ-ին, իսկ Արամ Ազարյանն այն ստացել է 25.09.2015 թ-ին:

Համաձայն ՎԻՎՕ 37-րդ հոդվածի՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, ինչպես նաև՝ եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Համաձայն ՎԻՎՕ 283-րդ հոդվածի՝ Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի՝ Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Վիճարկվող որոշումը կայացնելիս վարչական մարմինը կոպտորեն խախտել է վերը թվարկված ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, որոնցից բխում է, որ վարչական տույժը չի նշանակվել իրավախախտումը հայտնաբերելուց հետո երկամսյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից՝ Արամ Ազարյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 17.07.2015 թ-ի թիվ 293213 որոշումը:

« Հանձնաժողովի նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

« ՀՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետը, քննելով 17.07.2015 թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Ֆամիլե» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Ազարյանը թույլ է տվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտում: Արդյունքում, Արաբկիրի ՀՏ պետի կողմից 17.07.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293213 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Արամ Ազարյանին համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 2-րդ մասի վարչական տույժի ենթարկելու մասին՝ գումարով 100.000 դրամի չափով:

Գանգատում բերված փաստարկների կապակցությամբ, որ Որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հարկ է նշել, որ դրանք հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ-ում հարուցված վարչական վարույթին մասնակցելու համար «Ֆամիլե» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Ազարյանը ծանուցվել է 17.07.2015 թ-ին Արաբկիրի ՀՏ ներկայանալու համար: Նշված ծանուցումն Արամ Ազարյանի կողմից պատշաճ ստացվել է 11.07.2015 թ-ին: Սակայն, Արամ Ազարյանը չի ներկայացել 17.07.2015 թ-ին կայանալիք վարչական գործի քննությանը: Արդյունքում, պատշաճ ծանուցվելու, ինչպես նաև որևէ միջնորդություն նիստն առանց իր ներկայության քննելու կամ հետաձգելու վերաբերյալ չներկայացնելու պայմաններում, գործը քննվել է Արամ Ազարյանի բացակայությամբ:

Գործի քննության արդյունքում ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 17.07.2015 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293213 որոշումը, որը փոստային ծառայության միջոցով կողմին է ուղարկվել 20.07.2015 թ-ին:

Փոստային ծառայության կողմից 11.08.2015 թ-ին Որոշումը հետ է վերադարձվել Արաբկիրի ՀՏ՝ «Չպահանջված» նշագրմամբ:

Որոշումն Արամ Ազարյանին կրկին անգամ ուղարկվելուց հետո, այն վերջինիս կողմից ստացվել է 24.09.2015 թ-ին:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 17.07.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293213 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ, այն հիմնավոր է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 17.07.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293213 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

 **Վ.Մ.ԻՐՈՒՄՅԱՆ**